

# Ապավեն

Մակերես՝ 309.1 հակմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 130

Տնային տնտեսությունների թիվը՝ 39:

Գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 68 կմ հեռավորության վրա: Նախկինում մտել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ և ունեցել է Սայրիար Փոքր, Սարիալ-Փոքր, Սարիար, Սարիար Պոկր անվանումները: Ապավեն է վերանվանվել 1991 թվականին: Բարձրությունը ծովի մակարդակից 1680 մետր: Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը՝ 600-700 մմ:

Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 276 հա, որից՝ 32,3 հա վարելահող, 50 հա խոտհարք, 167,7 հա արոտ: Գյուղի մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Չբաղվում են դաշտավարությամբ, պտղաբուծությամբ (տանձ, խնձոր, սալոր), մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Չբաղվում են նաև անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարելի է համարել են դպրոցի բացումը, գազաֆիկացումը, միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

Համայնքը սահմանակից է Կրաստանի Հանրապետությանը: